ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում ձեռամբ Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի քահանայական ձեռնադրություն և օծում ստացան վեց սարկավագներ:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Տաճարում կատարվեց նորընծաների հավատո խոստովանությունը: Խարտավիլակները վկայեցին նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին և նզովեցին հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել սուրբ առաքյալների, երանաշնորհ հայրապետների ու վարդապետների հավատքին՝ ի նշան իրենց ուղղափառ դավանության արտասանելով Ս. Գրիգոր Տաթևացու «Հավատամքը»:

Կիրակի, հընթացս Ս. Պատարագի, 6 ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհական կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Հարություն սրկ. Տերտերյանը վերակոչվեց Տ. Թադեոս քահանա, Վարդան սրկ. Իսախանյանը՝ Տ. Անդրեաս քահանա, Սարգիս սրկ. Կիրակոսյանը՝ Տ. Տաթև քահանա, Արման սրկ. Հակոբյանը՝ Տ. Զավեն քահանա, Էդգար սրկ. Հակոբյանը՝ Տ. Մակար քահանա, և Մուշեղ սրկ. Սարգսյանը՝ Տ. Շնորհք քահանա: Աբրահամ Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիհ՝ նրանց տալով պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանություն:

«ՀՐԱԺԱՐՈՒՄՆ»